ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021 թվականի N 1 -Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17-րդ հոդվածով՝ Գեղարդ համայնքի ***ավագանին որոշում է.***

Հաստատել Գեղարդ համայնքի ավագանու առաջին նիստի օրակարգը:

1. Գեղարդ համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման մասին:
2. Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
3. Համայնքի կամավոր խնդիրների կարգը 2021թվականի համար սահմանելու մասին:
4.Կոտայքի մարզի Գեղարդ համայնքի ավագանու 2020թվականի դեկտեմբերի 11-ի N 34-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**Կողմ - 3** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**1.** ԹԱՌՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ

**2.** ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

**3.** ՏՈՆՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021 թվականի N 2 -Ա

## ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածով՝ Գեղարդ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը 2020 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Կողմ - 3** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**1.** ԹԱՌՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ

**2.** ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

**3.** ՏՈՆՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հունվարի 2021 թվականի N 3 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, ***համայնքի ավագանին որոշում է.***

1.Հաստատել Գեղարդ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելված 1, 2 -ի:

**Կողմ - 3** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**1.** ԹԱՌՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ

**2.** ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

**3.** ՏՈՆՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղարդ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղարդ, 077-70-84-06, geghard.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունվարի 2021 թվականի N 4 -Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Սահմանել համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը 2021 թվականի համար՝

1) սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման նպատակով՝

ա. մինչև 30 000 (երեսուն հազար) դրամ գումարի տրամադրումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 30 000 (երեսուն հազար) դրամգումարից ավելի ծախսի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

2) համայնքի տարբեր բնազավառներում սեփական լիազորություններն իրականացնել 2021 թվականի բյուջեով նախատեսված ծախսերի հաշվին՝

ա. մինչև 300.000(երեք հարյուր հազար) դրամ ծախս պահանջող աշխատանքների կատարումը վերապահել համայնքի ղեկավարին.

բ. 300.000 (երեք հարյուր հազար) դրամից ավելի ծախս պահանջող աշխատանքների դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:

**Կողմ - 3** **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

**1.** ԹԱՌՈՅԱՆ ԺԻՐԱՅՐ

**2.** ՄԱՆՈՒԿՅԱՆ ՄԱՐԳԱՐ

**3.** ՏՈՆՈՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՆԱՍԱՐ ԹԱՌՈՅԱՆ